


Անոց, անոց որ կը հծծին բնութեան
ու վշտի տակ, այն թշուառին՝ որ Սիրելիէն
կը բաժնուի, ո՞վ է որ մխիթարանք մը կ'ըլ-
լայ երկրի վրայ, եթէ ոչ կրօնքը, որ Անու-
նորին կը կնքէ այդ սրբազանուած հողա-
կոյտին, և Հասարակ մարդու սրտին վրայ:

Հ. Մ. ՊՈՏՈՒՆՅԱՆ



Ս Ր Ո Վ Ո Ւ Ն Ր Ո Վ *

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Կ Է Պ

Հ Ե Ն Ր Ի Կ Ո Ս Ս Ե Ն Կ Ե Վ Ի Զ Ի

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ա

Երկնքի և երկրի վրայ տեսնուած շատ մը
երեւոյթներ 1647ին ամէն տեսակ ազեակից
և արտաքոյ կարգի դէպքերու գուշակ եղան
ժողովրդեան: Ժամանակագիրը կը պատմեն
թէ այն տարին, մանաւանդ պարսնի սկիզ-
բը, մարտիի ամս մը իջաւ վայրենի Գաշ-
տիք ըսուած տեղւոյն վրայ և հունձքի բո-
լոր յայտերն ապականցաւ: Այս շարիքը կա-
րպակտ եղաւ թաթարական արշաւանաց .
ասոնցմէ վերջ, ամառը, տեղի ունեցաւ ա-
րեւու խաւարում մը և երկայնագէտ գիտա-
ւորի մը երեւնալը: Քանի մը տեղեկու, (ինչ-
պէս օրինակի համար, վարչաւորոյ) բնա-
կիչները՝ ամպին վրայ գերեզմանական փոռ
մը և հրեղէն խաչ մը նշմարեցին: Ժողո-
վուրդը՝ այս սպանալից նշաններէն սար-
սափաւար՝ կը սպասէր համաճարակ հիւան-
դութեան մը, որ բոլորովին պիտի ջնջէր

մարդկային ցեղը, անոր համար ինքզինքը
պահոց և աղօթից տուաւ: Ի լրումն ազեակից՝
ձեռք, երբէք չտեսնուած բան, մեղմ և
անձրեւային եղաւ, դետերը շտաեցան և հա-
լած ձիւներն ալ յորգելով՝ թումբերը դաստե-
ցին և գաշտերն ողողեցին: Ընդարձակ տա-
րածութեամբ՝ արտերը և անապատ գաշտե-
րը անանցանելի ճարձախուտի փոխուեցան .
արեւը՝ հարաւային կողմը՝ աշուպիի ջերմ
ճառագայթներ կը սփռէր՝ որ Պրազլուի գա-
ւառին մէջ, զեկտեմբեր ամսոյ կիսուն, վայ-
րենի Գաշտերուն վրոյ աշտան ցանքերը սկսան
բողբոջիլ: Երկունքի փեթեակներու շարք կը
բզզային խմորին, հօտեր մայելով և բառա-
չելով արածելու կ'իլլէին արտատեղիները:

Այս ամէնը սովորականէն դուրս էր. ամէն
մարդ արտաքոյ կարգի դէպքերու կը սպա-
սէր, ամէն ոք սարսափով դէպ ի վայրենի
Գաշտերը կը դարձնէր նայուածքը, ուսկից
կը սպասուայր վտանգը: Անապատ ընդար-
ձակ գաշտերու վրայ տեղի կ'ունենային ա-
վորական կոիւները՝ որոնցմէ միայն արծիւ-
ները, բազնները, ապառնները և վայրի գա-
զանները տեղեկութիւն ունէին: Այն ժամա-
նակ անապատ գաշտին միճակն այս էր .
Գաղթականութեանց վերջին հետքերը ճե-
կիւնէն անպին կը լմնային, ապա՝ մինչև
Լիման և մինչև ծովը՝ կը տարածուէր ա-
նապատը, երկու գետերու ընթացից մէջ,
Իրբե ի շրջանակի: Զրոյէժներէն անպին՝ Տնիւ-
բերի անկիւն ձեւացուցած տեղը՝ կ'եռայր
դեռ Ղազախ կեանքը, սակայն անշուշտ գաշ-
տին բուն մէջտեղերը բնաւ կենդանութիւն
չկար: Թերեւս հոս հոն եղբրքներու վրայ
տեսնուէին փոքրիկ ագարակներ, իբր ծովու
մէջ կղզեակներ: Այս երկիրը Հասարակապե-
տութեանն էր, սակայն թոյլ տուած էր թա-
թարներուն հոն արածեցնելու իրենց հօտե-
րը. բայց որովհետեւ Ղազախները Հակա-
ռակ կը կենային անոց, ընդարձակ արօ-
տատեղին պատերազմի գաշտ մը գարձեր
էր: Թէ քանի քանի կոիւներ հոն մղուած
են և քանի քանի զիակներ ինկած, ոչ ոք
կը հաշուէր կամ կը յիշէր. սակայն երբ որ
կը տեսնային թէ թոշուններու երամներ մի
և նոյն տեղւոյն վրայ թոշտելով գարձագարձ

* Անկէվելէ գլուխգործոց հոշակուած վեպ, որ
Արիսի մէջ սկսուած և այժմ գաղարման նմարդուած
հրատարակութենէն կանուի թարգմանուած էր ընտիր
լեզուով, ոչ միայն իրբե և տարբերական վեպ մը Հան-
դիսի ընթացողներուն կ'ընծայէր, այլ նաեւ մտած-
նազարկան և ազգագրական մեծ արժեք ունեցող գրա-
թիւն մը: ԽՐԱՊԱՐ.

կը դառնային, կը գուշակէին որ հոն կան ինկած դիակներ կամ անթաղ մնացած ուսկրոտիք: Անմշակ դաշտին բարձրացած խուտերուն մէջ՝ մարդկանց, իբրեւ գայլերու, որսորդութիւններ տեղի կ'ունենային: Հոն միայն ապաստանարան մը գտնելու համար կը մտնային, հոն առպետը շահատակութեանց ետեւէ կ'ըլլար, աւազակը հոն կը փնտռէր կոյրպուտը, Ղազախը զԹաթարը, Թաթարն զՂազախը: Իսկ հովիւը հոն կ'առաջնորդէր իրեն հօտը, զինուած՝ պաշտպանելու համար զայն աւազակաց զէմ: Միով բանի, անմշակ դաշտը միեւնոյն ժամանակ անապատ էր և բազմամարդ, լոխ և սպառնայից, խաղաղ և լի գարաններով, վայրենի՝ ոչ միայն երկրին անմշակ խտութեան, այլ նաեւ հօգիներու վայրենի խտութեան պատճառաւ: Երբեմն պատերազմի թասը մը կը դառնար: Թափառական Թաթարաց խումբեր, Ղազախներու զունցեր, Վրացի և Վազացի Ղոկասներ հոն մէկգմէկ կը հալածէին՝ ծալու ալիքներու նման: Գիշեր ժամանակ ձիերու խնջիւնը՝ իբրեւ արձագանք՝ կը պատասխանէր գայլերու ոռնոցին. թրուկներու պափուներ և փողերու ձայնը կը հասնէր մինչեւ ծովը, և Չեոնաշախի ու Քուկմանի ճամբէն մարդկային հեղեղ մը զէպի վար կը գահալիթէր: Քանի մ'աւաններ և ագարակներ կը պաշտպանէին գաշտին սահմանները: Թռչուններու անթիւ երամներ՝ որոնք զէպի արեամուտք կ'ուղղէին իրենց թռիչք, նշան էին որ և իցէ ասպատակութեան մը: Թռչուններուն մեկնելէն անմիջապէս վերջը, Թաթարները՝ Սեւ Անտառէն ելլալով կամ Տնիբերբ գետը վաւաքիոյ կողմէն անցնելով՝ կը խուժէին հարաւային զաւանդներ:

Այն ձմեռը փետրուարաց գաղթականութիւնը շտեմարեցան: Անմշակ դաշտին վրայ սփրբը էր խոր լուսթիւնը: Այն վարդկենի՝ յորում կը սկսի մեր պատմութիւնը, մարը մտնալու մօտ արեւը՝ իրեն հրացայա ճառագայլները կը սփռէր անապատ երկրի մը վրայ: Վայրենի Գաշտաց հիւսիսային եզերաց վրայ մինչեւ Օմեհնիք գետին բերանը ոչ ոք կը տեսնուէր, և ոչ ամենաթեթեւ շարժում մը անմշակ դաշտին չորցած և դեղինցած

խոտերուն մէջ: Հորիզոնին վրայ գեո կը փայլէր արեւային հրաշէկ սկաւառակին կէսը, սակայն երկինք սկսեց էր մթագնիլ և խաւարը կը պատէր անմշակ դաշտը: Հողարուրի մը գագաթան վրայ՝ որ աւելի գերեզմանի նմանութիւն ունէր քան թէ ըլլարի մը, կը բարձրանային աւանի մը մնացորդները, զոր երբեմն շինած էր Թէոդորոս Պուչիսաքի, և ապա ասպատակութիւնը կործանեց ինչ: Աւերակին մէջէն սեւ ստուեր մը կ'երկննար: Հեռուն կը փայլէին լայնածաւալ Օմեհնիքի ջուրբը, որոնք նոյն կէտին վրայ՝ կը դառնային զէպի Տնիբերբի թէ՛ երկնից կամարին վրայ և թէ՛ երկրիս վրայ կամաց կամաց լոյսերը կը մարէին: Բարձրէն կը լուսէր զէպի ծով թռչող կռուակներուն ձայնը. այն վե՛հ անպորտութիւնը վրդովող ուրիշ ձայն չկար:

Գիշերը կ'իջնար անապատին վրայ. սեւ սիւներու ժամը կը մօտենար: Պահակ Ղազախները կը պատմէին թէ Վայրենի Գաշտաց մէջ կը թափառէին մեղքի մէջ մեռած մարդկանց ուրուականները, աւանց վախնալու խաչերէ և եկեղեցիներէ: Կը պատմուէր թէ նոյն իսկ ուրուասեսիլ ձիաւորներ ու զեւորներու ճամբան կը խափանէին, և հեծեծանօք խաչի նշան մը կը ինդրէին: Վամպիւններ՝ որոնք ոռնալով կը հալածէին թռչունառ ճամբորդը. ուրուականներու ամբողջ լլգէտներ՝ որոնք այնչափ կը մօտենային աւաններուն՝ մինչեւ պահակք ի զէն կոչելու ազդակ կ'արձրկէին: Այս ամէնը յայտնի նշան էր պատերազմի: Նոյն իսկ մէկ ուրուականի մը հանդիպիլը՝ աղէկ նշան մը չէր, թէպէտ բացարձակապէս ալ շարագուշակ չէր, վասն զի շատ անգամ կենդանի մարդ մը կրնայ երեւնալ և աներեւոյթ ըլլալ ստուերի մը պէս, և գիւրաւ ուրուական մը կարծուիլ:

Ուրեմն տարօրինակ բան մը չէր՝ որ երբ հազիւ թէ գիշերը տարածուեցաւ Օմեհնիքի ջրերուն վրայ, և լուսինն ալ Տնիբերբէն անպին երեւնալով՝ արծաթագոծեց խոտերու ծայրերը և անմշակ դաշտը, ձիաւոր մարդ մը եօրեցաւ ամայի աւանին մօտ: Այն լուսով աւելի ցածը՝ երկու ուրիշ մարդկային էակ-

ներ ալ տեճնուեցան: Արագասահ ամպիկներ երբեմն երբեմն գիշերային աստղը կը բողբողակին, անոր համար այն տեսիլները երբեմն որոշակի կը տեսնուէին և երբեմն գիշերուան մթութեան մէջ կ'անհրեւութանային: Գէպի բլրակը՝ ուր ձիաւորն անշարժ կը կենար, ելլալու համար՝ զգուշութեամբ կը սուղային, քայլ առ քայլ, և ամէն վայրկեան կանգ առնելով: Իրենց շարժմանց մէջ չեմ գիտեր ինչպիսի սպանաւից բան մը կար, ինչպէս սպանաւից կը անմշակ պաշան ալ իրեն առ երեսն անգորութեան մէջ: Երբեմն Տիեզերքէն հովը կը փշէր՝ շարժելով չորցած խոտերը, սրունք շշուկաց մը կը հանէին՝ նման վախցողի մը հառաչանքին: Վերջապէս երկու անձինք աւերակաց ստուերին մէջ ան-երեւոյթ եղան: Գիշերային ազօս լուսով բլրան ծայրը ձիաւորը միայն կը տեսնուէր: Թեթեւ շշուկ մը յանկարծ անոր ուշադրութիւնը գրաւեց, մինչև սարահարթին եզերքը առաջ գնաց և սկսու մութին մէջ գիտել: Դոյն վայրկեան հովը զազրեցաւ. յանկարծ լուեցան սուր շէն մը և բարձր ալազակներ.

— Ալլահ, Ալլահ... Յիսուս Քրիստոս: Կրցողը թող ազատէ ինքզինքը: Զարկ: Սպաննէ: . . . Որտաց հրացաններու շաշխնը, հրաշէկ փայլակներ պատռեցին մութ խաւարը: Զէնքերու շոխն և ձիերու սուքերու զոփունը մէկմէկու կը խառնուէին: Զիաւորաց խումբ մը՝ կարծես երկրին տակէն բուսաւ, և մրկի նման գահալիծարար յարձկեցաւ լուս և տխուր անապատին մէջ: Ահաւոր շտապին՝ մարդկային հեծեծանքներ արձագանդ սուրին: Ապա լուսութիւն. կսիւր լմեցեր էր, անշուշտ այն սովորական տեսարաններէն մէկը՝ որոնց թաար էին վայրկեի Գուտները:

Զիաւորները բլրան վրայ հաւաքուեցան, և անոնցմէ ոմանք ձիերնէն իջալով՝ սկսան ուշադրութեամբ բան մը գիտել: Սակայն յանկարծ՝ մութին մէջ զօրասուր և հրամայող ձայն սը հնչեց:

— Կրակը վառեցէր:
Վայրկենի մը մէջ կոյժակներու ճարճատիւր լուեցաւ, և յարդի ու մախրի կոյժէ

մը բոցը գէպի վեր բարձրացաւ: Գետինը երկու ցից հաստատեցին՝ ուսկից սանը պիտի կախկին. վառուուն բոցը լուսաւորեց մարդկանց խումբ մը, որոնք ծռած՝ անշարժ գետինը պառկած մարմին մը կը գիտէին:

Կարմիր համազգեաստով և գայլու մարթէ գլխարկով զինուորներ էին: Անոնցմէ մէկը, որ գեղեցիկ ձիու մը վրայ նստած էր՝ առաջուորդն էր անշուշտ: Զիէն իջալով՝ մտեցաւ գետինը պառկած գիտիկն և հարցուց:

- Մ'ղջ է:
- Գեռ ողջ է, տեղակալ, կը խորպայքիչ մը. կը տեսնուի թէ հանգոյցը զինքը խղղեր է, — պատասխանեց յիտնապետը:
- Մ'ի է:
- Կ'երեւնայ որ նշանաւոր մէկն է:
- Գոհութիւն Աստուծոյ, — բուս միւսը, և ուշ ուշով գիտեց պառկողը:
- Աթաման մ'է, — բուս:
- Եւ ի՞նչ ձի, — գոչեց զարմացմամբ յիտնապետը, — և ոչ իսկ թանր այսպիսի ձի մ'ունի:

Տեղակալը ձին զննեց. երեսը ուրախութեամբ փայլեցաւ: Երկու զինուորներ ստանձնէն բռնեց ձին. իսկ վեհանաճն կենդանին պինչերն ուռեցնելով և վիզը երկնցնելով՝ վախցած՝ իրեն աէրը կը գիտէր:

- Ձին մերը օլտի բլլայ, տեղակալ,
- հարգուց յիտնապետը:
- Անպիտան շուն, անապատ գաշտին մէջ քրիտստնայ մը իրեն ձիէն զրկե՛լ կ'ուզես:
- Միթէ միւր աւարը չէ՛:
- Հոգեվարքին խորլացը թօսակցութիւնը ընկմիջեց:

- Բերանը օդի լեցսուր ու գօտին քակէ,
- հրամայեց սպայն:
- Գիշեր հոս պիտի անցնենք:
- Այո՛, Զիերուն թմարերը վար առէք ու աղէկ կրակ մը վառեցէք:

Զինուորները հիւանդին չորս կողմը հաւաքուեցան. ոմանք խելքը գլուխը բերելու համար՝ զինքը շփել սկսան, ուրիշներ վագեցին չոր փայտեր բերելու, ոմանք ազտի և արջու մարթեր փռեցին գետինը:

Տեղակալը այլ եւ խորդացող անձանօ,

թին վրայ չմտածելով, քակեց զօտին և կրակին ջուլ վերարկուի մը վրայ պտակեցաւ : Գեղեցիկ բայց նիշար երիտասարդ մըն էր, սեւ մազերով, արծուոնն : Դէմքն ազնուական, և աչքերը յանդուզն արիութեամբ կը վառվէին : Խիս պիտերը և երկար ժամանակ չածիլուած մօրուքը՝ գէմքին լըջութիւն մը կու առչին, որ տարիքին չէր համապատասխաներ :

Նոյն ասնն ծառաներէն երկուքը ընթրիքը պատրաստելու ետեւէ էին : Նոր մութուած ոչխար մը կրակին վրայ դրուեցաւ : միեւնոյն ժամանակ ուրիշ մը՝ ճարտար կերպով վայրի այժ մը կը քերթէր : Գուրս հանեցին շատ մը նոյն օրը որսացուած լըբամարդիներ և արօսներ :

Բոցը կը ճարճատէր՝ չորս կողմը լուսոյ շրջանակ մը տարածելով : Գեղտինը պտուկողը կամաց կամաց ինքերին կու գար : վայրկեան մը աչքերը զինքը շրջապատող անծանօթներուն վրայ դարձուց. ապա փորձեց վեր ելլալ : Քիչ մ'առաջ սպային հետ խօսող զինուորը՝ բռնելով թեւերէն՝ զինքը վեր վերցուց, ուրիշ մը ձեռքը նիզակ մը սուսաւ, որուն վրայ ուժով մը կոթնեցաւ : Դեռ երեք կարմիր էր և երակներն ուռած :

— Օղի՛ — ըսաւ մեղմ ձայնով մը :

Անիջապէս օդի բերին իրեն . անյազարար խնելով՝ կարծես ակելի լաւ զգաց ինքզինքը : Սրուակը շրթունքներէն հեռացնելով՝ ակելի որոշ ձայնով մը հարցուց .

— Որո՞նց ձեռքը կը գտնուի :

Տեղակալը սաք ելաւ և անոր մօտեցաւ :

— Ջրեղ ազատողներուն ձեռքը :

— Դուք չէք ուրե՞ն հանդոյցը վիզս նետող :

— Մենք հանդոյց չենք գործածեր, այլ սուր : Հարցմունքը նախատինք է մեզի. դուն աւազակաց խումբի մը ձեռքն ինկած էիր, և եթէ կ'ախորժիս տեսնալ զիրենք՝ ահաւասիկ հոն փառուած են, մորթուած ոչխարներու պէս :

Այս բնելով՝ տեղակալը բլրան ստորտար պտակած դիակները կը ցուցնէր :

— Եթէ այդպէս է — պատասխանեց անծանօթը — թողուցէք որ թիչ մը հանցիմ, Ետրայարեկի Թրգ. Զ. Ա. ԳՈՆՏԵՔՆԵՆ

ՀԱՅ ՀԱՆԴԵՍՆԵՐ

ՄՈՒՐՃ, (ԴԻՒ 10, 1905).

Ամսաթերթս ընդհանրապէս վիպակով մը կը բանայ իր համարները, և ընդհանրապէս ալ վ. Փափազեանը կ'ըլլայ գրողը : Այս անգամ մեզի ներկայացնել կ'ուզէ զիւղական պատկեր մը, վերնագրուած խոյր որ « յաջորդ համարում » պիտի վերջանայ . Բագմակիս ալ թերեւս գալ համարին մէջ անոր վերլուծութիւն մը տայ : Վիպակիս կը յաջորդեն բանաստեղծութիւններ, արձակ կամ ոտանաւոր, ինքնագիր կամ թարգմանածայ, ինչպիսի է Գոս կը հակեցնեն, իսկ ես կը վստեմ, որոնք մեծ ու լուրջ յօդուածներու միջնարարներն են : Եւ իրաջնէ շահեկան յօդուած մըն է Բ. իշխանեանի Տեոտեսկան զարգացման փազերը. բայց ինչ որ անախորժ կ'ընէ ատոր ընթերցումը՝ օտար բաներու անխտիր հիւրընկալութիւնն է : Վերնագրին երեք բառերէն մէկը՝ ֆաղ, այլազգի է. այս համեմատութեամբ գումարեցէք 16 էջ յօդածի մը մէջ եղածները, շուտով ահագին քանակ մը կ'ունենանք : Ի՞նչ աստիճան հայերէն է հասուած մը՝ ուր հինգ վեց սող անգամ մը՝ զիմացդ կ'ըլլեն սաստեմ, տարիեկտ, պերսեանայ, մասսա, ինտեկ, կապիտալ, կոմբինացիա, տեխնիքական, ֆունկցիա, ակրիկոպրոպրա, ֆեոզայ, սխտեմ, տիպիքական, պրոցես, սոցիալական . . . և ասոնց նման դեռ ուրիշ շատ ձայնիք :

Լուսանագի Արձագանքի օրով, Բագմակիս և ուրիշ թերթեր՝ ամէն ձեւի սակ բողոքեցին այս օտարամուլութեան զէմ. բայց կ'երեւի թէ ամէն սերունդի պէտք է ատանձին յանձնարարել : Ինչ որ ազգը հին ու յարգի բան մ'ունի՝ իր լեզուն է. պէտք չէ որ թիչ մը ակելի ակնածութեամբ վարուինք անոր հետ : Դեռ չորցած չեն այն զբաղեցները որ թափուեցան, մինչև որ վերք—Հայաստանիին ու Դեղ կենացին լեզուէն, այսօրուան հայերէնին հասանք. Ինչ պիտի ըլլայ վառտակ